

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ապահովագրության պայմանագիրը ավարտվում է և Ապահովագրված անձը կորցնում է բժշկական օգնություն ստանալու իրավունքից.
  - Գործողության ժամկետի ավարտի դեպքում.
  - Ապահովագրողի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում.
  - Ապահովագրվողի կողմից ապահովագրական պայմանագրով նախատեսված ժամկետներում և նշված ծավալներով հերթական ապահովագրական վճարը չիրականացնելու դեպքում.
  - Ապահովագրվողի մահվան դեպքում՝ ֆիզիկական անձի կամ Ապահովագրված անձի.
  - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի լիկվիդացման դեպքում.
  - Դատարանի կողմից ապահովագրության պայմանագիրը չեղյալ հայտարարելու դեպքում.
  - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն Կանոններով նախատեսված այլ դեպքերում:
2. Ապահովագրվողն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել ապահովագրության պայմանագրից: Ապահովագրվողի կողմից ապահովագրության պայմանագրից հրաժարման դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրական պարգևը վերադարձի ենթակա չէ:
3. Ապահովագրվողի նախաձեռնությամբ, մեկ կամ մի քանի ապահովագրված անձանց մասով, ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման պարագայում, այդ անձանձ ապահովագրական պարգևի չօգտագործված մասը վերադարձի ենթական չէ, սակայն գործող ապահովագրության պայմանագրի շրջանակներում, նոր անձանց ապահովագրման համար Ապահովագրողի կողմից կարող է հաշվի առնվել:
4. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին կողմերը պարտավոր են ծանուցել մեկը մյուսին ապահովագրության պայմանագրի ենթադրյալ դադարեցումից ոչ պակաս քան 30 օր առաջ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան չի նախատեսված:

5. Ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովագրվողը /Ապահովագրված անձը/ պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել ապահովագրության պոլիսը կամ վկայագիրը:
6. Ապահովագրողի պահանջով ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում, վերջինս վերադարձնում է Ապահովագրվողին պայմանագրի չավարտված ժամկետի մասով չօգտագործված ապահովագրական պարզեր՝ կրած ծախսերի պահումով: Չօգտագործված ապահովագրական պարզերի վերադարձն իրականացվում է միայն պայմանագրով նախատեսված ապահովագրական պարզերի վճարված մասի վերաբերմամբ, ելնելով հետևյալ պարամետրերից.

$$HCP = \frac{\sum_1^n B_3 \times (1 - K_{p\theta\delta})}{D_{onn}} \times D_{\kappa}; \text{ որտեղ}$$

- HCP - ը՝ չօգտագործված ապահովագրական պարզեր է
- n - ը՝ սկզբնական ապահովագրական վճարների քանակն է
- $D_{\kappa}$  - ը՝ օրերի քանակն է մինչև վճարված ժամկետի ավարտը
- $B_3$  - ը՝ փաստացի վճարված ապահովագրական վճարների գումարն է
- $K_{p\theta\delta}$  - ը՝ գործի վարման համար կատարվող ծախսերի գործակիցն է
- $D_{onn}$  - ը՝ վճարված ժամանակահատվածի օրերի քանակն է:

7. Եթե ապահովագրության պայմանագրի ստորագրումից հետո պարզվի, որ Ապահովագրվողը Ապահովագրողին հայտել է սույն Կանոնների 1.3. կետում թվարկված ապահովագրված անձանց առողջության վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագիրը հայտարարել անվավեր:
8. Եթե ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձանց մոտ հայտնաբերվում են հիվանդություններ, որոնք համաձայն պայմանագրի չեն հանդիսանում ապահովագրական դեպք, ապա ապահովագրողն իրավունք ունի վերջնական դիագնոզի հաստատման պահից տվյալ անձանց վերաբերմամբ դադարեցնել պայմանագրի գործունեությունը:

